



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ը

„15. հունիսի 2015 թվականի N.33.D...: ՆԿ

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 02.08.2012  
ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 61-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով և  
հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ թիվ 143-Ն հրամանի  
պահանջները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ ԷԲՊ նախարարի 02.08.2012թ թիվ 61-Ա հրամանի 1-ին կետով  
հաստատված «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական  
պաշարների նախարարության ներքին աուդիտի գործունեության կանոնակարգը»  
Հավելված 1-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Հրամանի մյուս կետերը թողնել անփոփոխ:



ԵՐՎԱՆԴ ԶՆԱԽՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ  
«Հներգեդիկայի և բնական պաշարների նախարարի  
2015թվականի հուլիսի 15-ի N 330-Ն հրամանի

ՀԱՎԵԼՎԱԾ N 1  
«Հներգեդիկայի և բնական պաշարների նախարարի  
02.08.2012թ. 61-Ա հրամանի

### ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

### I. Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության (այսուհետև՝ Նախարարություն) աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գործունեության կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) հանդիսանում է Նախարարի, ներքին աուդիտի կոմիտեի և ներքին աուդիտի բաժնի աշխատանքները սահմանող հիմնական փաստաթուղթ, որով սահմանվում են ներքին աուդիտի նպատակը, լիազորությունները և պարտականությունները: Նախարարությունում ներքին աուդիտի /այսուհետև՝ Աուդիտ/ գործունեությունը իրականացվում է՝ «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1233-Ն որոշման, ՀՀ Ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 8-ի N 974-Ն, 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն և փետրվարի 23-ի թիվ 165-Ն հրամանների, ինչպես նաև Նախարարության կանոնադրության պահանջներին համապատասխան:

2. Աուդիտի համակարգը ներքին աուդիտի իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, պահանջների և ներքին աուդիտի մասնակիցների իրավունքների և պարտականությունների ամբողջությունն է: Ներքին աուդիտի են ենթարկվում Նախարարության ֆինանսական կառավարմանը, հսկողությանն առնչվող բոլոր գործառույթները:

3. Աուդիտը իրականացվում է ներքին աուդիտի ստանդարտների, ներքին աուդիտի վարքագծի կանոնների և ներքին աուդիտի սկզբունքներին համապատասխան: Աուդիտն աջակցում է Նախարարության ֆինանսական կառավարման և հսկողության համակարգերի ապահովմանը:

4. Ներքին աուդիտի համակարգը գործում է նախարարի անմիջական ենթակայությամբ:

5. Աուդիտը իրականացնում է Նախարարության Ներքին աուդիտի բաժինը /այսուհետև՝ Բաժին/:

6. Նախարարը ապահովում է Նախարարությունում Աուդիտի համակարգի առկայությունը և գործունեությունը:

7. Աուդիտի ենթարկվող ստորաբաժանումների և ենթակա միավորների պաշտոնատար անձիք պարտավոր են համագործակցել ներքին աուդիտորների հետ և իրավունք չունեն չբացահայտելու Նախարարությանը վերաբերվող տեղեկությունները կամ մերժելու դրանց տրամադրումը:

8. Նախարարությունում Նախարարի 08.06.2012թ N 38-Ա հրամանով ձևավորվել է Ներքին աուդիտի կոմիտե /այսուհետև՝ Կոմիտե/, հաստատվել գործունեության կարգը և կազմը :

9. Նախարարության աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերը հաստատվում են մինչև տվյալ տարվա հունարի 1-ը:

10. Նախորդ տարվա ներքին աուդիտի ամփոփ հաշվետվությունը մինչև յուրաքանչյուր հաջորդող տարվա մարտի 1-ը ներկայացվում է ՀՀ ֆինանսների նախարարություն/լիազոր մարմին/:

11. Ներքին աուդիտի համակարգում Նախարարը.

1) հաստատում է ներքին աուդիտի կանոնակարգը, վավերացնում է ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերը.

2) սահմանում է ներքին աուդիտի կոմիտե.

3) ապահովում է ներքին աուդիտի համակարգի առկայությունը և գործունեությունը.

4) խորհրդատվական ծառայությունների նպատակով նախաձեռնում է աուդիտ և աուդիտի առաջադրանքով սահմանում դրա խնդիրները ու շրջանակը.

5) իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

## II. Ներքին աուդիտի նպատակը

12. Ներքին աուդիտը հանդիսանում է անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ, որն ուղղված է Նախարարության գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը: Կառավարչական գործընթացների, ներքին հսկողության համակարգի, ռիսկերի կառավարման գործընթացների համակարգված և կարգավորված գնահատման ու դրանց բարելավման միջոցով Աուդիտն աջակցում է Նախարարությանը՝ վերջինիս նպատակների արդյունավետ իրականացման գործում:

Աուդիտն իրականացվում է Բաժնի ռազմավարական և տարեկան ծրագրերի հիման վրա՝ նախարարին հավաստիացման կամ խորհրդատվական ծառայություններ մատուցելու միջոցով:

13. Աուդիտի գործունեության նպատակներն են՝

1) Նախարարին և ներքին աուդիտի կոմիտեին հավաստիացնել, որ Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները պատշաճորեն կատարում են իրենց վրա դրված պարտականությունները (ներքին հսկողության, ռիսկերի կառավարման և կառավարչական գործընթացների համակարգի ներդրումը և պահպանումը):

- 2) օժանդակել Նախարարությանը՝ լինել հաշվետու ողջ հանրության առջև՝ գնահատելով վերջիններիս կողմից օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը և իրականացված գործառույթների օգտավետությունը և արդյունավետությունը,
- 3) տրամադրել վերահսկող մարմիններին Նախարարի կողմից ներկայացված ֆինանսական գործունեության և այլ կատարողականի վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատության և հավաստիության վերաբերյալ օբյեկտիվ կարծիք,
- 4) օժանդակել Նախարարին հասնել Նախարարության առջև դրված նպատակներին՝ բարելավելով Նախարարության համակարգերը և ծառայությունները,
- 5) իր ներկայությամբ նվազեցնել խարդախության, վատնումների և չարաշահման այլ դեպքերի տեղի ունենալու հավանականությունը,
- 6) ապահովել աշխատակիցների վարքագծի համապատասխանությունը սահմանված վարքագծի կանոններին:

### **III. Ներքին աուդիտի բաժնի լիազորությունները**

14. Բաժնի պետի և ներքին աուդիտորների համար հասանելի են Նախարարության գործունեության վերաբերյալ ամբողջ, այդ թվում գաղտնի տեղեկատվությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված գաղտնի տվյալների հասանելիության կարգի համաձայն՝ բոլոր գրառումները, այդ թվում՝ էլեկտրոնային, որոնք անհրաժեշտ են աուդիտի իրականացման համար:
15. Բաժնի պետը և ներքին աուդիտորները իրավունք ունեն՝
  - 1) աջակցություն ստանալու այն միավորների ղեկավարներից և աշխատակիցներից, որտեղ իրականացվում է աուդիտը.
  - 2) պատասխանատու աշխատակիցներից պահանջելու աուդիտի համար անհրաժեշտ ցանկացած տվյալ և տեղեկություն:
16. Բաժնի պետը օգտվում է նաև հետևյալ իրավունքներից՝

1) գեկուցում է նախարարին աուդիտի իրականացման խոչընդոտների և խնդիրների վերաբերյալ.

2) առաջարկում է նախարարին՝ փորձագետ նշանակել, եթե ներքին աուդիտի իրականացման համար պահանջվում են հատուկ գիտելիքներ ու հմտություններ.

3) համագործակցում է Կոմիտեի և նրա անդամների հետ, մասնակցում է նրանց խորհրդակցություններին.

4) մասնակցում է ֆինանսական հաշվետվությունների, կառավարչական գործընթացների և աուդիտի հսկման պարտականությունների վերաբերյալ Նախարարի և կոմիտեի խորհրդակցություններին և նիստերին, բարձրացնում է ռազմավարական և գործառնական զարգացումներին, ռիսկերի բարձր աստիճան ունեցող համակարգերին և ընթացակարգերին վերաբերող հարցեր.

5) Բաժնի գործառնությունները ապահովելու նպատակով Նախարարի և Կոմիտեի քննարկմանն է ներկայացնում նաև վարչարարությանն առնչվող հետևյալ հարցերի վերաբերյալ առաջարկություններ՝

ա. անհրաժեշտ տեխնիկական, ֆինանսական միջոցների և դրանց օգտագործման հաշվարկների/կառավարչական հաշվառում/ .

բ. մարդկային ռեսուրսների կառավարման՝ ներառյալ աշխատակիցների աշխատանքի գնահատման և խրախուսման.

գ. ներքին հաղորդակցման և տեղեկատվական հոսքերի.

դ. աուդիտի քաղաքականության և ընթացակարգերի վարչարարության:

6). կատարում է իր լիազորություններից բխող այլ առաջարկություններ:

17. Նախարարությունից դուրս Բաժնի պետը և ներքին աուդիտորները օգտվում են իրավական ակտերով իրենց վերապահված լիազորություններից:

#### **IV. Ներքին աուդիտի բաժնի պարտականությունները**

18. Բաժնի պետը և ներքին աուդիտորներն իրականացնում են օրենքով նախատեսված լիազորությունները և պարտավոր են՝

1) հետևել ներքին աուդիտի ստանդարտներին, ներքին աուդիտորի վարքագծի կանոններին, ներքին աուդիտի կանոնակարգին և լիազոր մարմնի կողմից հաստատված ներքին աուդիտի մեթոդաբանությանը,

2) չհրապարակել և չտրամադրել գործունեության ընթացքում կամ արդյունքում իրենց հայտնի դարձած տեղեկությունները՝ բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,

3) գիտակցաբար չմասնակցել անօրինական գործողությունների և կատարել աշխատանքներ, որոնք վարկաբեկում են ներքին աուդիտորի մասնագիտությունը և տվյալ նախարարությունը:

19. Բաժնի պետը պատասխանատու է ներքին աուդիտի բաժնի ընդհանուր գործունեության համար, և նա պետք է՝

1) պատրաստի և Նախարարին ու ներքին աուդիտի կոմիտեին ներկայացնի ներքին աուդիտի կանոնակարգի նախագիծը, ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերը,

2) կատարի աշխատանքի (աուդիտորական առաջադրանքների) բաշխում ներքին աուդիտորների միջև՝ ըստ նրանց գիտելիքների և հմտությունների.

3) կազմի և Նախարարին ու ներքին աուդիտի կոմիտեին ներկայացնի ներքին աուդիտի տարեկան հաշվետվությունը,

4) հետևի ներքին աուդիտի տարեկան ծրագրի կատարմանը և ներքին աուդիտի մեթոդաբանության իրականացմանը,

5) անհրաժեշտության դեպքում, խորհրդակցելով լիազոր մարմնի հետ, մշակի առանձին մեթոդաբանություն ներքին աուդիտի բաժնի գործունեության համար,

6) Բաժնի գործունեության ընթացիկ ուսումնասիրությունների՝ ներքին գնահատումների միջոցով իրականացնի աուդիտի որակի երաշխավորման ծրագիր՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով նաև արտաքին խորհրդատուների:

20. Բաժնի պետը հաշվետու է Նախարարին և Կոմիտեին ու վերջիններս ներկայացնում է հաշվետվություններ, այդ թվում՝

1) աուդիտի արդյունքների և արձանագրված խնդիրների, արված առաջարկությունների և Նախարարության գործունեությունը բարելավելու նպատակով ձեռնարկված գործողությունների մասին,

- 2) ներքին աուդիտի տարեկան գործունեության ծրագրի իրականացման մասին,
  - 3) ներքին աուդիտի իրականացման համար օգտագործված և անհրաժեշտ ռեսուրսների մասին,
  - 4) Բաժնի պետի և ներքին աուդիտորների առջև ծառայած սահմանափակումների բոլոր դեպքերի մասին:
21. Եթե բացահայտվում են կեղծիքի նշաններ, ապա ներքին աուդիտորներն այդ մասին տեղեկացնում են Բաժնի պետին, որը տեղեկացնում է Նախարարին և Կոմիտեին:
22. Ներքին աուդիտորները չեն կարող հավաստիացման աուդիտ իրականացնել այնպիսի գործունեության կամ միավորների մասով, որոնց նրանք վերջին մեկ տարվա ընթացքում մատուցել են խորհրդատվական ծառայություններ կամ որոնց կազմում աշխատել են:
23. Բաժնի պետը և ներքին աուդիտորները, բացի ներքին աուդիտին առնչվող աշխատանքներից, տվյալ Նախարարությունում այլ գործառույթներ և աշխատանքներ իրականացնելու իրավունք չունեն:

#### **V. Ներքին աուդիտի դիրքը**

24. Ներքին աուդիտի դիրքը ներքին աուդիտի համակարգում ներառում է հետևյալը.
- 1) գնահատում է Նախարարության հսկողության գործընթացների, ռիսկերի գնահատման և կառավարչական գործընթացների արդյունավետությունը,
  - 2) բարելավում է գնահատման արդյունքում հայտնաբերված թերությունները և բացթողումները՝ ներկայացնելով առաջարկություններ Նախարարին,
  - 3) աջակցում է Նախարարին՝ իրականացնելով խորհրդատվական ծառայություններ,
  - 4) հանդիսանում է սխալների և խարդախության դեպքերի կանխարգելիչ գործոն,
  - 5) զգոն է պահում Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին (աուդիտի ենթակա միավորների ղեկավարներին)՝ կանխելով հսկողության գործընթացների ոչ արդյունավետ իրականացումը:



## VI. Ներքին աուդիտի շրջանակը

25. Ներքին աուդիտն ընդգրկում է Նախարարության գործունեությանն առնչվող բոլոր գործառույթները և Նախարարության գործունեության արդյունքները, այսինքն՝ Նախարարության ներքին հսկողության ողջ համակարգը՝ ներառյալ բոլոր գործառնությունները, ռեսուրսները, ծառայությունները:

26. Նախարարության ներքին աուդիտի բաժինը պետք է տրամադրի համապատասխան եզրակացություն Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների, ենթակա հիմնարկների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ Միավորներ)՝

- 1) հսկողության վերաբերյալ,
- 2) ներքին աուդիտի կազմակերպման համապատասխանության վերաբերյալ,
- 3) կապալառուների կամ ծառայություն մատուցողների հսկողության համակարգերի վերաբերյալ, եթե այդ հսկողությունն էական է Նախարարության նպատակների իրագործման համար:

27. Բաժնի պետն աուդիտի ենթակա Միավորների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը կազմելիս կարող է որոշում կայացնել՝ աուդիտի եզրակացությունն ինքնուրույն կազմելու մասին, կամ այն կազմելիս հիմնվել ենթակա Միավորների վերաբերյալ արտաքին աուդիտորների կամ ստուգում իրականացնողների տրամադրած կարծիքների վրա:

28. Նախարարության գործունեությունը բարելավելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելով՝ ներքին աուդիտը պետք է աջակցի Նախարարությանը հասնել իր նպատակներին՝

1) օժանդակելով Նախարարին՝ Նախարարությունում առկա ռիսկերը բացահայտելու և գնահատելու գործում,

2) գնահատելով ֆինանսական կառավարման, հսկողության համակարգերի արդյունավետությունը և համապատասխանությունը հետևյալ պայմաններին՝

ա. Նախարարի կողմից ռիսկերի բացահայտում, գնահատում և կառավարում,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Նախարարության գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին, գերատեսչական նորմատիվ ակտերին և այլնին) համապատասխանություն,

- գ. տնտեսող, արդյունավետ և օգտավետ գործառույթներ,
- դ. տեղեկությունների վստահելիություն և ամբողջականություն,
- ե. կորուստներից, չարաշահումներից և վնասներից ակտիվների ու ռեսուրսների պահպանման հուսալիություն,
- զ. առաջադրանքների կատարում և նպատակների իրագործում:

29. Բաժինը պատասխանատու է Նախարարության ենթակայությամբ գործող հիսուն և ավելի տոկոս պետական մասնակցությամբ ընկերությունների, նրանց մասնաճյուղերի և պետական ոչ առևտրային կազմակերպությունների ներքին աուդիտի իրականացման համար: Այդ գործառույթների շրջանակներում Աուդիտի բաժինը պարտավոր է.

- 1) ապահովել կազմակերպությունների միջև գործող բոլոր համակարգերի և կապերի նախանշումը.
- 2) գործուղել Բաժնի աշխատակցին կամ աշխատակիցներին Նախարարության համակարգում գործող պետական ոչ առևտրային կազմակերպություններ, հիմնարկներ, հիսուն և ավելի տոկոս պետական մասնակցությամբ կազմակերպություններ օրենսդրությամբ սահմանված դեպքերում.
- 3) ապահովել, որ սույն կետի 2-րդ ենթակետում նշված գործուղումները հաշվի առնվեն Աուդիտի աշխատանքների ծրագրման ժամանակ, իսկ գործուղված աշխատակիցների գործունեությունը համապատասխանի ներքին աուդիտի կանոնակարգում սահմանված դրույթներին:

30. Ներքին աուդիտը չի հանդիսանում Նախարարության կառավարչական գործընթացի մաս կամ ռիսկերի կառավարման համար պատասխանատու, ուստի Նախարարությունում կառավարչական և ռիսկերի կառավարման գործընթացների, ինչպես նաև ներքին հսկողության համակարգի համար պատասխանատվությունը, ներառյալ խարդախության բացահայտումը, ուսումնասիրումը և կանխումն ամբողջովին հանդիսանում է Նախարարի և Կոմիտեի պատասխանատվությունը, որոնք պարտավոր են ապահովել աշխատանքների և գործընթացների պատշաճ իրականացումը:

31. Բաժնի աշխատանքները կարող են ընդգրկել հետևյալ գործողությունները.

- 1) նշանակալի ռիսկի սահմանում և գնահատում,
- 2) ռիսկերի կառավարման համակարգի բարեփոխմանը նպաստում,
- 3) ռիսկերը չեզոքացնող հսկողության գործընթացների գնահատում,
- 4) հսկողության արդյունավետ ու օգտավետ գործընթացների և շարունակական բարեփոխումների խրախուսում,
- 5) ֆինանսական և գործառնական տեղեկատվության հավաստիությունն ու հուսալիությունն ապահովող ընթացակարգերի գնահատում և շեշտադրում,
- 6) հսկողության համակարգի բարեփոխումների առաջարկում, որոնք օժանդակում են Նախարարության կառավարչական գործընթացների հետևյալ նպատակներին.

ա. Նախարարության ներսում վարքագծի կանոնների և ձևավորված արժեքների խթանում,

բ. Նախարարության բաժինների գործունեության արդյունավետ կառավարման և հաշվետվողականության ապահովում,

գ. ռիսկերի և հսկողության գործընթացների վերաբերյալ Նախարարության համապատասխան բաժիններին տեղեկացման ապահովում:

32. Բաժինը պատասխանատու է նաև միջգերատեսչական համակարգերի աուդիտի իրականացման համար, եթե այդ համակարգերն ուղղակիորեն ազդում են Նախարարության գործունեության վրա: Այդ գործառույթների շրջանակներում Բաժինը պարտավոր է.

- 1) ապահովել կազմակերպությունների միջև գործող բոլոր համակարգերի և կապերի նախանշումը,
- 2) Նախարարի և ներքին աուդիտի կոմիտեի համաձայնությամբ, այլ կազմակերպությունների ներքին աուդիտի բաժնի հետ համատեղ, հաստատել նրանց համապատասխան դերի և պատասխանատվության կարգը,
- 3) ապահովել, որ նշված կարգը հաշվի առնվի աուդիտի աշխատանքների ծրագրման ժամանակ, իսկ այնտեղ սահմանված դրույթներն արդյունավետ կատարվեն Բաժնի կողմից:

33. Միջգերատեսչական համակարգերի աուդիտի ժամանակ այլ նախարարությունների հետ ներքին աուդիտի բաժնի դերի և պարտականությունների մասին բոլոր համաձայնագրերում անհրաժեշտ է

սահմանել, որ սահմանված աշխատանքներն իրականացվում են ներքին աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այն դեպքում, երբ Բաժնի պետը, ելնելով իր իրավասությունների սահմանափակումներից, ի վիճակի չէ Նախարարին գնահատական ներկայացնել միջգերատեսչական համակարգերի վերաբերյալ, ապա նա պարտավոր է այդ մասին զեկուցել Նախարարին՝ հիմնավորելով պատճառները

34.Ներքին աուդիտն իրականացվում է որոշակի աուդիտորական առաջադրանքների ապահովմանն ուղղված հավաստիացման կամ խորհրդատվական ծառայությունների մատուցման միջոցով:

35.Հավաստիացման ծառայությունների համար իրականացվող աուդիտը կազմված է ներքին աուդիտորի կողմից ապացույցների օբյեկտիվ գնահատումից, որպեսզի անկախ դիրքորոշում կամ եզրակացություն ներկայացվի գործընթացի, համակարգի կամ աուդիտի ենթարկված այլ բաղադրիչի վերաբերյալ:

36. Հավաստիացման ծառայությունների համար իրականացվող յուրաքանչյուր աուդիտի խնդիրներն ու շրջանակը սահմանվում են աուդիտորական առաջադրանքով:

37.Հավաստիացման ծառայությունների համար նշանակված աուդիտորական առաջադրանքն իրականացվում է համակարգային մոտեցմամբ՝ համապատասխանության աուդիտի կամ կատարողականի աուդիտի միջոցով կամ համապատասխանության և կատարողականի աուդիտի տեսակների համակցությամբ:

38.Խորհրդատվական ծառայությունների համար նշանակված աուդիտորական առաջադրանքը բաղկացած է խորհրդատվության, կարծիքի ներկայացման, ուսուցման և այլ ծառայությունների մատուցումից, որոնք ուղղված են Նախարարության ռիսկերի կառավարման և հսկման գործընթացի բարելավմանը:

39.Խորհրդատվական ծառայությունների նպատակով նշանակված աուդիտը նախաձեռնում է Նախարարը և յուրաքանչյուր նման աուդիտի խնդիրներն ու շրջանակը սահմանվում են աուդիտորական առաջադրանքով:

40.Ներքին աուդիտն իրականացվում է հետևյալ փուլերով՝ պլանավորում, փաստացի գնահատումների իրականացում, հաշվետվություն և հետագա գործողություններ՝ ներկայացված առաջարկությունների կատարմանը հետևելու նպատակով:

**VII. Ներքին աուդիտի առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ փաստաթղթերի, աշխատակազմի և գույքի հետ կապված հարցեր**

41. Նախարարության ուսումնասիրման ենթակա կառուցվածքային ստորաբաժանումների նախանշման և ընդհանուր հսկողության միջավայրի գնահատման համար Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումները Բաժին են ներկայացնում ռիսկերի գնահատման տեղեկագիրը (այսուհետ՝ Տեղեկագիր) մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը (Տեղեկագիրը անհրաժեշտ է ներկայացնել նաև թղթային տարբերակով ստորագրված ղեկավարի կողմից):

42. Նախարարության ներքոհիշյալ Միավորները՝ իրականացված ստուգումների վերաբերյալ **Ընդերքի պետական տեսչությունը** (Ձև1), **Էներգետիկայի պետական տեսչությունը** (Ձև2), իրականացված գործառույթների վերաբերյալ **Ընդերքի տրամադրման գործակալությունը** (Ձև3) **Օգտակար հանածոների պաշարների գործակալությունը**՝ (Ձև 4), տեղեկատվություն են ներկայացնում բաժին յուրաքանչյուր կիսամյակի ավարտից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

**VIII. Ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագիրը**

43. Կազմակերպության ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կազմակերպում է ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագրի իրականացումը, ինչպես նաև աջակցում դրա իրականացմանը, որն ընդգրկում է ներքին աուդիտի ստորաբաժանման բոլոր կողմերը և շարունակաբար մոնիթորինգի ենթարկում դրա արդյունավետությունը: Որակի ծրագիրը նախատեսվում է այնպես, որ օգնի բարելավել կազմակերպության գործառնությունները և ապահովի ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության համապատասխանությունը ստանդարտներին և վարքագծի կանոններին: Ներքին աուդիտի ստորաբաժանումը ապահովում է որակի ծրագրի ընդհանուր արդյունավետությունը մոնիթորինգի ենթարկելու և գնահատելու գործընթացը: Գործընթացը ներառում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գնահատումներ: Ներքին գնահատումները ներառում են ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության շարունակական գնահատումները, ինչպես նաև ինքնագնահատման միջոցով կամ կազմակերպության ներսում ստանդարտներին ու վարքագծի կանոններին

լավատեղյակ այլ անդամների կողմից իրականացված պարբերական գնահատումները:

Ներքին գնահատումները իրականացվում են սույն կանոնակարգի անբաժանելի մաս կազմող ստուգաթերթերի միջոցով (**Հավելվածներ՝ 1-3**):

#### **IX. Եզրափակիչ դրույթներ**

44. Բաժնի պետի կողմից տեղեկատվության տրամադրումը կարող է իրականացվել միայն Նախարարի թույլտվությամբ:

45. Սույն կանոնակարգը հիմք է հանդիսանում աշխատանքների պարբերական գնահատումների համար:

46. Բաժնի պետը պետք է պարբերաբար գնահատի, թե կանոնակարգով սահմանված նպատակները, լիազորությունները և պարտականությունները շարունակում են արդյոք նպաստել Նախարարության նպատակների իրականացմանը:

47. Պարբերական գնահատումների արդյունքները պետք է ներկայացվեն ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանը և հաստատվեն Նախարարի կողմից:

**Աուդիտի առաջադրանքի արդյունավետության գնահատում**

Առաջադրանքի համարը՝

Աուդիտի առաջադրանքի աշխատանքային խմբի ղեկավար՝

Աուդիտի ենթարկվող միավոր՝

Ամսաթիվը՝

N	Գնահատման տարրեր	Գ	Լ	Բ	Վ
1	Առաջադրանքի յուրաքանչյուր նպատակի իրագործման համար մշակվել է աուդիտի աշխատանքային ծրագիր:				
2	Աշխատանքային փաստաթղթերը և աուդիտի աշխատանքային ծրագրերը մշակվել և ստուգվել են պահանջվող ժամկետներում:				
3	Աուդիտի աշխատանքային ծրագիրը և համապատասխան աշխատանքների շրջանակը ճշգրտվել է՝ ելնելով փաստացի պայմաններից:				
4	Առաջադրանքի աշխատանքային փաստաթղթերը, աուդիտի աշխատանքային ծրագրերը և մյուս համապատասխան փաստաթղթերը վերջնական տեսքի են բերվել սահմանված ժամկետներում:				
5	Աշխատանքային փաստաթղթերում հստակ կերպով հիմնավորված են և/կամ բացատրվում են յուրաքանչյուր աուդիտի աշխատանքային ծրագրի հիման վրա կատարված աշխատանքների արդյունքները և եզրակացությունները:				
6	Աշխատանքային փաստաթղթերը ճշգրիտ վերնագրված են, համարակալված և պարունակում են համապատասխան հղումներ:				
7	Բոլոր աշխատանքային փաստաթղթերը ստուգվում են, որպեսզի լինեն ամբողջական, ճիշտ և լիարժեք հիմնավորեն քննարկվող նախնական եզրակացությունները:				
8	Առաջադրանքի աշխատանքը կատարվել է, և բոլոր աշխատանքային փաստաթղթերը ներկայացվել են ժամանակին:				
9	Ստացված արդյունքներում ներառվում են չափանիշները, պայմանը, պատճառը, ազդեցությունը: Առաջարկություններում անդրադարձ է կատարվում պատճառներին:				
10	Արդյո՞ք աուդիտի աշխատանքային փաթեթը (աուդիտի աշխատանքային ծրագրեր, աշխատանքային փաստաթղթեր, հաշվետվություններ, և այլն) բավարարում է նախատեսվող ընթերցողին և հստակ հաղորդում են խնդիրի էությունը:				
	<b>Ընդամենը՝</b>				
	<b>Միջին գնահատականը</b>				

Լրացուցիչ մեկնաբանություններ \_\_\_\_\_

Գնահատող \_\_\_\_\_

Ստորագրություն \_\_\_\_\_

Առաջադրանքի իրականացման որակի վերաբերյալ ստուգաթերթ՝ տրված աուդիտի ենթարկվող միավորի կողմից

Առաջադրանքի համարը՝

Աուդիտի առաջադրանքի աշխատանքային խմբի ղեկավար՝

Աուդիտի ենթարկվող միավոր՝

Ամսաթիվը՝

Ինդիքում ենք յուրաքանչյուր հարցի համար նշել միայն մեկ պատասխան՝

4 = Գերազանց, 3 = Լավ, 2 = Բավարար, 1 = Վատ

N	Գնահատման տարրեր	Գ	Լ	Բ	Վ
1	Ստացել էք արդյոք առաջադրանքի մասին տեղեկացնող ծանուցում նախքան առաջադրանքի մեկնարկը:				
2	Արդյո՞ք սկզբնական հանդիպումն անցկացվել է նախքան առաջադրանքի մեկնարկը կամ այն սկսելուն զուգահեռ:				
3	Արդյո՞ք սկզբնական հարցազրույցի ժամանակ Ձեզ հետ քննարկվել են առաջադրանքի նպատակները, շրջանակները, ժամկետները և կազմակերպչական այլ հարցեր:				
4	Արդյո՞ք հարցազրույցի ժամանակ Ձեզ հարցրել են առաջադրանքի վերաբերյալ Ձեր մտահոգությունների մասին:				
5	Մեկնարկային հարցազրույցի ժամանակ արդյո՞ք եզրափակիչ հանդիպման համար նախնական ժամկետ է սահմանվել:				
6	Արդյո՞ք աուդիտորներն արագ են արձագանքել Ձեր աշխատանքային իրավիճակի առանձնահատկություններին:				
7	Արդյո՞ք առաջադրանքի ընթացքում Դուք պարբերաբար տեղեկացվել եք էական հարցերի մասին՝ դրանց զարգանալուն զուգընթաց:				
8	Արդյո՞ք եզրափակիչ հանդիպումը տեղի է ունեցել համաձայնեցված ժամկետներում:				
9	Արդյո՞ք եզրափակիչ հանդիպման ընթացքում Ձեզ հետ քննարկվել են ստացված արդյունքները պատշաճ մանրամասնությամբ:				
10	Եզրափակիչ հանդիպման ժամանակ արդյո՞ք բառերի փոփոխության, ոճի և ստացված արդյունքների տեսանկյունների հետ կապված հարցերին արձագանքելիս աուդիտորները ճկուն են գտնվել:				
11	Արդյոք Ձեր պատասխանները (կամ պատասխանելու ցուցումները) քննարկվել են եզրափակիչ հանդիպման ժամանակ:				
	<b>Ընդամենը՝</b>				
	<b>Միջին գնահատականը՝</b>				

Ի՞նչ փոփոխություններ կառաջարկեիք կատարել աուդիտի մեր գործընթացը առավելագույնս կատարելագործելու համար:

1. \_\_\_\_\_
2. \_\_\_\_\_
3. \_\_\_\_\_

Լրացուցիչ մեկնաբանություններ

Գնահատող՝

Աուդիտի միավորի ղեկավար



**Ներքին աուդիտի ստորաբաժանման համապատասխանության գնահատման ստուգաթերթ**

**Ներքին աուդիտի կանոնակարգը և շրջանակները**

N	Համապատասխանության հարցեր	Ա	Մ	Ո
1	Առկա՞ է արդյոք ներքին աուդիտի ստորաբաժանման պաշտոնապես ընդունված կանոնակարգ:			
2	Արդյո՞ք կանոնակարգը վավերացված է կազմակերպության ղեկավարի կողմից:			
3	Արդյո՞ք կանոնակարգը հստակ նկարագրում է ներքին աուդիտի ստորաբաժանման նպատակը, դերը, լիազորությունները և պատասխանատվությունը:			
4	Արդյո՞ք կանոնակարգը նկարագրում է ներքին աուդիտի ստորաբաժանման դերը ռիսկերի կառավարման, կառավարչական և ներքին հսկողության գործընթացներում:			
5	Արդյո՞ք կանոնակարգով սահմանվում են ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի հարաբերությունները կազմակերպության ղեկավարի և ներքին աուդիտի կոմիտեի հետ:			
6	Արդյո՞ք կանոնակարգը տալիս է ներքին աուդիտի ստորաբաժանման՝ աուդիտի իրականացմանն առնչվող գրանցումների, ֆիզիկական գույքի նկատմամբ հասանելիության և աշխատակիցների հետ հաղորդակցվելու իրավունք:			
7	Արդյո՞ք այն հստակ նկարագրում է ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության շրջանակը:			
	Ընդհանուր գնահատական. արդյոք՞ ապահովվում է ներքին աուդիտի առանդարտների հետ համապատասխանությունը:			
	Եթե պատասխանը <ոչ> է կամ <մասամբ>, ապա նշել անհամապատասխանության աստիճանը կամ պատճառները և անհամապատասխանության թույլատրելի մակարդակը:			

**Անկախություն և օբյեկտիվություն**

N	Համապատասխանության հարցեր	Ա	Մ	Ո
1	Արդյո՞ք ներքին աուդիտի ստորաբաժանումը ազատված է գործադիր պատասխանատվությունից:			
2	Ներքին աուդիտի ստորաբաժանումն ապահովվո՞ւմ է այն, որ հենց աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարը պատասխանատվություն կրի ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից կատարված որևէ աշխատանքների արդյունքում արված առաջարկությունների կամ փոփոխությունների իրականացման համար:			
3	Արդյո՞ք ներքին աուդիտի ստորաբաժանումը պահպանում է հետագայում աուդիտի ենթարկվող միավորի վերստուգման իրավունքը:			
4	Արդյո՞ք ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը հաշվետու է կազմակերպության այնպիսի օղակին, որը հնարավորություն է տալիս ներքին աուդիտի ստորաբաժանմանն արդյունավետորեն իրականացնել իր պարտականությունները:			
5	Արդյո՞ք ներքին աուդիտորներին արգելվում է աուդիտի ենթարկել այն միավորները, որոնց համար նրանք նախկինում գործադիր պատասխանատվություն են կրել:			
6	Եթե ներքին աուդիտորը խորհրդատվություն է տրամադրում ներքին հսկողության գործընթացների նախագծի մշակման հետ կապված հարցերում, արդյո՞ք տվյալ			

	գործընթացների հետ անչվող հետագա առաջադրանքները հանձնարարվում են այլ աուդիտորներին:			
7	Արդյո՞ք աուդիտորները աշխատում են ոտտացիայի սկզբունքով:			
8	Արդյո՞ք ներքին աուդիտորներից պահանջվում է տեղեկացնել աուդիտի աշխատանքներին վերաբերող ցանկացած շահերի բախման մասին:			
9	Արդյո՞ք աուդիտի առաջադրանքներն այնպես են պլանավորվել, որ կանխվեն շահերի ցանկացած բախում:			
10	Արդյո՞ք ներքին աուդիտորներն օբյեկտիվ են:			
11	Արդյո՞ք գնահատվում է օբյեկտիվությունը և այն պահանջվում է ներքին աուդիտորից՝ որպես ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության արդյունավետության կարևոր գործոն:			
12	Արդյո՞ք ներքին աուդիտորները չեն իրականացրել հավաստիացման աշխատանքներ, այն ոլորտներում, որոնց համար նրանք վերջին մեկ տարվա ընթացքում պատասխանատու են եղել:			
13	Առաջարկվող խորհրդատվական աշխատանքների հետ կապված անկախության և օբյեկտիվության հավանական խոչընդոտների դեպքում, արդյո՞ք այդ խոչընդոտների մասին տեղյակ է պահվում կազմակերպության ղեկավարը և ներքին աուդիտի կոմիտեն՝ մինչև աշխատանքը սկսելը:			
14	Ընդհանուր գնահատական. արդյո՞ք ապահովվում է ներքին աուդիտի ատանդարտների հետ համապատասխանությունը:			
15	Եթե պատասխանը <ոչ> է կամ <մասամբ>, ապա նշել անհամապատասխանության աստիճանը կամ պատճառները և անհամապատասխանության թույլատրելի մակարդակը:			

### Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար

N	Համապատասխանության հարցեր	Ա	Մ	Ո
1	Առկա՞ է կազմակերպությունում աշխատակից, ով վերջնական պատասխանատվություն է կրում ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության համար և հանդես է գալիս որպես ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար:			
2	Արդյո՞ք ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կառավարում է ներքին աուդիտի ստորաբաժանումն այնպես, որ այն կազմակերպության համար ստեղծի հավելյալ արժեք:			
3	Արդյո՞ք ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը ապահովում է, որ ներքին աուդիտի ստորաբաժանման ռեսուրսները լինեն համարժեք, բավարար և արդյունավետ կազմակերպվեն՝ աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերն իրագործելու համար:			
4	Եթե ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակիցներն աուդիտի աշխատանքն ամբողջությամբ կամ մասամբ իրականացնելու համար չունեն անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ կամ այլ ունակություններ, արդյո՞ք ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը ստանում է համապատասխան խորհրդատվություն և աջակցություն կամ ներգրավում է համապատասխան փորձագետներին:			
5	Արդյո՞ք ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը ներքին աուդիտի ստորաբաժանման համար սահմանել է քաղաքականություն և ընթացակարգեր:			
6	Արդյո՞ք ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը մշակել է և շարունակում է իրականացնել որակի երաշխավորման և բարելավման ծրագիր:			
7	Արդյո՞ք ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարն որոշում է ներքին աուդիտի ստորաբաժանման առաջնահերթությունները՝ սահմանելով դիսկի վրա հիմնված ռազմավարական ծրագիր, որը համապատասխանում է կազմակերպության նպատակներին:			

8	Արդյո՞ք ներքին աուդիտի ստորաբաժանման ռազմավարական ծրագիրը հիմնված է ռիսկի գնահատումների վրա:			
9	Արդյո՞ք ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը ներքին աուդիտի ստորաբաժանման ռազմավարական և տարեկան էական միջանկյալ փոփոխությունների և ռեսուրսների սահմանափակումների ազդեցության մասին տեղեկացնում է կազմակերպության ղեկավարին:			
10	Արդյո՞ք ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պարբերաբար կազմակերպության ղեկավարին հաշվետվություն է ներկայացնում ներքին աուդիտի ստորաբաժանման նպատակների, լիազորությունների, պատասխանատվությունների և կատարողականի վերաբերյալ:			
11	Արդյո՞ք ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարն արտաքին որակի գնահատումների արդյունքները հաղորդում է կազմակերպության ղեկավարին:			
12	Արդյո՞ք ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարն առաջադրանքի արդյունքները տրամադրում է կազմակերպության ղեկավարին և աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարին:			
13	Եթե վերջնական հաշվետվությունում առկա է էական սխալ կամ բացթողում, արդյո՞ք ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը ճշտված հաշվետվությունները տրամադրում է բոլոր այն կողմերին, որոնք ստացել էին հաշվետվության սկզբնական տարբերակը:			
14	Արդյո՞ք ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը հետամուտ է լինում աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարին տրամադրված առաջարկությունների ներդրման գործընթացին:			
15	Արդյո՞ք ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը վերահսկում է աուդիտի աշխատանքային փաստաթղթերի փաթեթից օգտվելու իրավունքը: Արդյո՞ք ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը ստանում է կազմակերպության ղեկավարի հավանությունը՝ նախքան արտաքին կողմերին նման գրանցումների տրամադրումը:			
16	Արդյո՞ք ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը մշակում է աուդիտի աշխատանքային փաստաթղթերի պահպանման պահանջներ:			
	Ընդհանուր գնահատական. արդյո՞ք՝ ապահովվում է ներքին աուդիտի ատանդարտների հետ համապատասխանությունը:			
	Եթե պատասխանը <ոչ> է կամ <մասամբ>, ապա նշել անհամապատասխանության աստիճանը կամ պատճառները և անհամապատասխանության թույլատրելի մակարդակը:			

### Կարողունակություն և պատշաճ մասնագիտական վերաբերմունք

N	Համապատասխանության հարցեր	Ա	Մ	Ո
1	Արդյո՞ք տեղյակ են ներքին աուդիտորները, թե ինչ գիտելիքներ, հմտություններ և այլ ունակություններ են անհրաժեշտ իրենց պարտականությունների կատարման համար:			
2	Արդյո՞ք ապահովվում է, որ ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակիցները տիրապետեն անհրաժեշտ գիտելիքներին, հմտություններին և այլ ունակություններին՝ որպես առանձին աշխատակիցներ և որպես խումբ:			
3	Արդյո՞ք առկա են անհրաժեշտության դեպքում համապատասխան գիտելիքներ, հմտություններ և այլ ունակություններ ունեցող փորձագետների ներգրավման ընթացակարգեր:			
4	Արդյո՞ք առաջնահերթ է համարվում մասնագետների շարունակական վերապատրաստումը:			
5	Ներքին աուդիտի աշխատանքներ իրականացնելիս արդյո՞ք ներքին աուդիտորները ստանում են առաջադրանքի իրականացման համար անհրաժեշտ ուղղորդում և աջակցություն:			
6	Ներքին աուդիտի աշխատանքներ իրականացնելիս արդյո՞ք ներքին աուդիտորներն ի վիճակի են բացահայտել խարդախության հայտանիշները:			

7	<p>Ներքին աուդիտի աշխատանքներ իրականացնելիս արդյո՞ք ներքին աուդիտորները ցուցաբերում են պատշաճ մասնագիտական վերաբերմունք, դիտարկելով՝</p> <p>ա. նպատակների իրագործման համար անհրաժեշտ աշխատանքի ծավալը,</p> <p>բ. այն հարցերի հարաբերական բարդությունը, էականությունը և նշանակությունը, որոնց վրա տարածվում են աուդիտի ընթացակարգերը,</p> <p>գ. ռիսկի կառավարման, ներքին հսկողության համակարգի և կառավարչական գործընթացների պատշաճությունն ու արդյունավետությունը,</p> <p>դ. խարդախության, էական սխալների, խախտումների, կամ անհամապատասխանության հավանականությունը,</p> <p>ե. աուդիտի ծախսերը՝ համեմատած հավանական օգուտների հետ:</p>			
8	Ներքին աուդիտի աշխատանքներ իրականացնելիս արդյո՞ք ներքին աուդիտորներն աջալիցություն են դրսևորում ցանկացած էական ռիսկերի, գործառնությունների կամ ընթացակարգերի նկատմամբ:			
9	Արդյո՞ք ներքին աուդիտորները գիտակցում են, որ պատշաճ ուշադրությունը անսխալականություն չի ենթադրում և աուդիտի ընթացակարգերն ինքնին, անգամ պատշաճ մասնագիտական վերաբերմունքով իրականացնելու դեպքում, չեն երաշխավորում, որ բոլոր սխալները և թերությունները կբացահայտվեն:			
10	Արդյո՞ք ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը ստացել է ներքին աուդիտորի որակավորում և ունի համապատասխան ղեկավարման փորձ:			
11	Ներքին աուդիտի ստորաբաժանումը համալրված է համապատասխան թվով աշխատակիցներով, որոնց որակավորումը և փորձը բավարար է ներքին աուդիտի ստորաբաժանման նպատակների իրականացման համար:			
12	Արդյո՞ք ներքին աուդիտի ստորաբաժանման բոլոր աշխատանքները ղեկավարվել և վերահսկվել են համապատասխան որակավորում ունեցող ներքին աուդիտորները՝ որպես առաջադրանքի աշխատանքային խմբի ղեկավարներ:			
13	Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը սահմանել է աշխատակիցների համարման գործընթաց, որի նպատակն է ապահովել բոլոր աշխատակիցների մտավոր ունակությունների, անձնական հատկանիշների և որակավորման համապատասխան մակարդակ:			
	Ընդհանուր գնահատական. արդյո՞ք ապահովվում է ներքին աուդիտի ատանդարտների հետ համապատասխանությունը:			
	Եթե պատասխանը <ոչ> է կամ <մասամբ>, ապա նշել անհամապատասխանության աստիճանը կամ պատճառները և անհամապատասխանության թույլատրելի մակարդակը:			

### Ներքին աուդիտի ստորաբաժանման ռազմավարական ծրագիր

N	Համապատասխանության հարցեր	Ա	Մ	Ո
1	Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը մշակել է ռազմավարական ծրագիր կազմակերպության ղեկավարին ռիսկերի կառավարման, ներքին հսկողության համակարգի և կառավարչական գործընթացների մասին օբյեկտիվ գնահատական և եզրակացություն տրամադրելու համար:			
2	Արդյո՞ք կազմակերպության ղեկավարի կողմից վավերացվում է ռազմավարական ծրագիրը:			
3	Արդյո՞ք ռազմավարական ծրագիրը ներկայացվում է Լիազոր մարմնին:			
4	Ռազմավարական ծրագիրը պարբերաբար վերանայվում է համապատասխան միջանկյալ փոփոխությունները հաշվի առնելու նպատակով:			
5	Արդյո՞ք կազմակերպության ղեկավարի կողմից վավերացվում են ռազմավարական ծրագրի միջանկյալ փոփոխությունները:			
6	Արդյո՞ք համատեղելի են ներքին աուդիտի ստորաբաժանման նպատակները կազմակերպության գործունեության նպատակների հետ:			
7	Արդյո՞ք ռազմավարական ծրագիրը կազմված է ռիսկերի վրա հիմնված չափորոշիչների վրա:			
8	Արդյո՞ք այդ չափորոշիչների քանակը և կազմը հաստատվում է կազմակերպության ղեկավարի կողմից:			
	Ընդհանուր գնահատական. արդյո՞ք ապահովվում է ներքին աուդիտի ատանդարտների հետ համապատասխանությունը:			
	Եթե պատասխանը <ոչ> է կամ <մասամբ>, ապա նշել			

### Հաշվետվությունների ներկայացում

N	Համապատասխանության հարցեր	Ա	Մ	Ո
1	Արդյո՞ք առաջադրանքի արդյունքները ժամանակին են հաղորդվում աուդիտի ենթարկվող միավորին:			
2	Արդյո՞ք առաջադրանքի հաշվետվությունները կարելի է որակել որպես՝ ա. ճշգրիտ, բ. օբյեկտիվ, գ. հստակ, դ. հակիրճ, ե. կառուցողական, զ. ամբողջական, է. ժամանակին:			
3	Արդյո՞ք յուրաքանչյուր առաջադրանքի հաշվետվությունը կազմվում է կազմակերպության ղեկավարի, աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարի հետ համաձայնեցված ձևաչափով և ժամկետներում:			
4	Հաշվետվության ներածական մասում ներկայացնո՞ւմ է առաջադրանքի հիմնական խնդիրները:			
5	Հաշվետվությունները ներառո՞ւմ են ամփոփագիր, որը ներկայացնում է ամբողջ հաշվետվության հակիրճ նկարագրությունը:			
6	Հաշվետվությունները ներառո՞ւմ են բացահայտումներ և եզրակացություններ հայտնաբերված թերությունների վերաբերյալ:			
7	Հաշվետվությունում ներառված առաջարկությունները դասակարգված են վերջիններիս կարևորության աստիճանի՝ հիմնական, միջին, փոքր:			
8	Արդյո՞ք ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը տարին առնվազն մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում կազմակերպության ղեկավարին ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքների մասին՝ ներառելով կազմակերպության ռիսկերի կառավարման, ներքին հսկողության համակարգի և կառավարչական գործընթացների արդյունավետության վերաբերյալ եզրակացությունը:			
	Ընդհանուր գնահատական. արդյո՞ք ապահովվում է ներքին աուդիտի առանդարտների հետ համապատասխանությունը:			
	Եթե պատասխանը <ոչ> է կամ <մասամբ>, ապա նշել անհամապատասխանության աստիճանը կամ պատճառները և անհամապատասխանության թույլատրելի մակարդակը:			

### Որակի երաշխավորում

N	Համապատասխանության հարցեր	Ա	Մ	Ո
1	Առկա՞ է արդյոք որակի երաշխավորման և բարելավման ծրագիր:			
2	Արդյո՞ք այն անդրադառնում է ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացրած տարբեր տեսակի աշխատանքներին և ընդգրկում է ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության բոլոր կողմերը:			
3	Արդյո՞ք շարունակաբար մոնիթորինգի է ենթարկվում ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության արդյունավետությունը:			
4	Արդյո՞ք որակի երաշխավորման ծրագիրն օգնում է հավելյալ արժեքի ստեղծման և կազմակերպության գործունեության բարելավման հարցերում:			
5	Արդյո՞ք այն գնահատում է ստանդարտների և վարքագծի կանոնների հետ համապատասխանության մակարդակը:			
6	Արդյո՞ք առաջադրանքի կատարման ժամանակ ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակիցների աշխատանքը վերահսկվում է՝ նպատակ ունենալով հետևել աշխատանքների ընթացքին, գնահատել որակը և կրթել աշխատակազմին:			
7	Արդյո՞ք որակի ներքին գնահատումները ձեռնարկվել են պարբերաբար			

	(յուրաքանչյուր տարի), որոնց արդյունքները փաստաթղթավորվել են և կազմվել է համապատասխան գործողությունների ծրագիր:			
8	Արդյո՞ք իրականացվում են որակի գնահատումներ, այդ թվում՝ ներքին աուդիտի ստորաբաժանման կատարողականի շարունակական և պարբերական դիտարկումներ՝ ինքնագնահատման միջոցով:			
9	Արդյո՞ք կազմակերպությունից դուրս գործող որակավորված, անկախ գնահատող խումբը կամ Լիազոր մարմինը յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ իրականացնում է ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության արտաքին գնահատում:			
10	Արդյո՞ք արտաքին գնահատումների արդյունքների մասին տեղեկացվում է կազմակերպության ղեկավարը:			
11	Գոյություն ունի՞ գործողությունների ծրագիր որակի ներքին կամ արտաքին գնահատումների ժամանակ հայտնաբերված թերությունները վերացնելու համար:			
12	Եթե արտաքին գնահատմամբ արձանագրվում են անհամապատասխանության դեպքեր, որոնք ազդում են ներքին աուդիտի ստորաբաժանման ընդհանուր գործունեության վրա, արդյո՞ք այդ մասին տեղեկացվում է կազմակերպության ղեկավարը:			
	Ընդհանուր գնահատական. արդյո՞ք՝ ապահովվում է ներքին աուդիտի ատանդարտների հետ համապատասխանությունը:			
	Եթե պատասխանը <ոչ> է կամ <մասամբ>, ապա նշել անհամապատասխանության աստիճանը կամ պատճառները և անհամապատասխանության թույլատրելի մակարդակը:			